ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 07 հուլիսի 2020թ.

2020թվականի հուլիսի 07-ին, ժամը 16:00-ին Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման համար ստեղծված գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ, որին մասնակցում էին նախագահ Վահրամ Ապրեսյանը, անդամներ Սլավիկ Հարությունյանը, Գեորգի Աղաջանյանը, «Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկի կազմակերպիչ Միքայել Խաչատրյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Նիստը վարում էր Հանձնաժողովի նախագահ Վահրամ Ապրեսյանը:

Օրակարգում՝

1. «Քաղաքացու բյուջե» ենթադրամաշնորհային մրցույթի հայտադիմումի գնահատման արդյունքին հավանություն տալու և համայնքային ներդրման չափ սահմանելու մասին:

Միքայել Խաչատրյանը ներկայացրեց, որ Բյուրեղավանի համայնքապետարանի և «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության միջև կնքված համաձայնագրի շրջանակներում հայտարարված «Քաղաքացու բյուջե» ենթադրամաշնորհային մրցույթին ներկայացրել են «Մշակութային, հասարակական կյանքի ակտիվացում համայնքում» ծրագրի նախագիծը, որի արդյունքներն ամփոփոխ հանձնաժողովի կողմից դրական է գնահատվել:

Լ. Պողոսյանը ներկայացրեց, որ նախագիծը կազմվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետը (*Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում վարկերի և օրենքով սահմանված կարգով այլ միջոցների ներգրավման վերաբերյալ*) և Բյուրեղավանի

համայնքապետարանի ու «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության միջև կնքված համաձայնագրի 2-րդ հոդվածը: Նախագիծը կազմվել է համաձայն համայնքային մակարդակում «Քաղաքացու բյուջե»-ի տրամադրման համար «Քաղաքացիների ձայնն ու գործունեությունը Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի ուղենիշերի:

Որոշման նախագծով նշված ենթադրամաշնորհի համար նախատեսվում է սահմանել համայնքային ներդրում՝ 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Քաղաքացու բյուջե» ենթադրամաշնորհային մրցույթի հայտադիմումի գնահատման արդյունքին հավանություն տալու և համայնքային ներդրման չափ սահմանելու մասին*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին,

Կողմ- 3 Դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վահրամ Ապրեսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Սլավիկ Հարությունյան

_____ Գեորգի Աղաջանյան